



վարչական տույժ նշանակելու մասին թիվ 1200265770 որոշման՝ Ստեփանակերտ քաղաքի բնակիչ Մհեր Սպարտակի Բաբայանը, 2012 թվականի հուլիսի 7-ին, Երևան քաղաքում VAZ 21154-120-22 մակնիշի S3630 համարանիշի տրանսպորտային միջոցը վարելիս, խախտել է ճանապարհային երթևեկության կանոնները և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124<sup>4</sup>-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ենթարկվել 10000 /տաս հազար/ դրամի չափով տուգանքի:

Հայցվորը 2013 թվականի սեպտեմբերի 26-ին դիմելով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան (այսուհետ՝ Վարչական դատարան՝ ընդդեմ Մհեր Սպարտակի Բաբայանի՝ խնդրել է վճարման ենթակա գումարի վերաբերյալ արձակել վճարման կարգադրություն:

Վարչական դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմամբ վճարման կարգադրություն արձակելու հայցադիմումը մերժվել է՝ վարչական ակտն ուժի մեջ չմտնելու պատճառաբանությամբ:

Հայցվորը վերաքննիչ բողոք է ներկայացրել ԼՂՀ վերաքննիչ դատարան (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան՝ միջնորդելով հարգելի համարել վերաքննիչ բողոք բերելու բողոքարկման համար բաց թողած դատավարական ժամկետը և այն ընդունել վարույթ:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 3-ի որոշմամբ Հայցվորի միջնորդությունը մերժվել է և վերաքննիչ բողոքը՝ վերադարձվել:

Հայցվորը նշված որոշման դեմ 2013 թվականի նոյեմբերի 29-ին փոստային ծառայության միջոցով բերել է վճարել բողոք:

Վճարել բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճարել բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճարել բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջները և հայցվորի միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք բերելու համար բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու մասին, անհիմն մերժել է:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով. Վարչական դատարանի՝ վճարման կարգադրություն արձակելու մասին հայցադիմումը մերժելու մասին, 2013 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը Հայցվորը ստացել է 2013 թվականի հոկտեմբերի 11-ին և ստացման վերաբերյալ փաստաթղթի վրա համապատասխան նշումով դրվել է ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայության մտից դրոշմակնիքը: Նշված փաստաթղթի՝ Վարչական դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 27-ի ԸԻԴ N 3925/03/2013 թվակիր գրության լուսապատճենը, վերաքննիչ բողոքին կից փաստաթղթերի հետ, 2013թ. հոկտեմբերի 25-ին ուղարկվել է Վերաքննիչ դատարան: Սակայն, Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ Հայցվորը Դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը՝ 2013 թվականի հոկտեմբերի 11-ին ստանալու մասին որևէ ապացույց չի ներկայացրել: Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարան ուղարկված փաստաթղթերի հետ Դատարանի նշված որոշումը հոկտեմբերի 11-ին ստանալու

մասին, ապացույցն առկա չլինելու դեպքում, Վերաքննիչ դատարանի գրասենյակը պարտավոր էր արձագանքելու և իրենց հայտնելու, ինչը չի կատարվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը:

### **3. ինքնաձևով մատչելի է Դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը նույն օրն ուղարկվել է Հայցվորին:**

1. ԸԻԴ 3927/03/2013թ. վճարման կարգադրություն արձակելու մասին վարչական նյութով Դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը նույն օրն ուղարկվել է Հայցվորին:

2. Փոստային ծառայության միջոցով ներկայացրած վերաքննիչ բողոքը թվագրված է 2013 թվականի հոկտեմբերի 25-ին (ուրբաթ օր, որի համաձայն՝ Դատարանի որոշումը ՀՀ ՃՈ-ում ստացվել է 2013 թվականի հոկտեմբերի 11-ին և ըստ վերաքննիչ բողոքի՝ փաստը հաստատվում է գործում առկա հետադարձ ծանուցման թերթիկով և վերաքննիչ բողոքին կցված՝ Վարչական դատարանի վերադարձման մասին գրության լուսապատճենով:

3. Վերաքննիչ բողոքի համաձայն՝ կից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը.

ա) ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայության պետի կողմից, առանց թվագրության Ժ.Կարապետյանին տրված լիազորագիրը.

բ) Բողոքը կողմին և որոշում կայացրած դատարան ուղարկելու մասին փոստային երկու անդորրագրերը.

գ) Վերաքննիչ բողոքում վկայակոչված փաստաթղթերի լուսապատճենները:

4. Վճռաբեկ բողոքին կցված նյութերից նկատելի է, որ վճարման կարգադրություն արձակելու հայցադիմումը մերժելու մասին Դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը, Դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 27-ի գրությամբ, ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայությունում թիվ 12861 համարի տակ մուտքագրվել է 2013 թվականի հոկտեմբերի 11-ին:

### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.2-րդ հոդվածի 2-րդ մասի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ միջանկյալ դատական ակտը ստանալուց հետո՝ 15 -օրյա ժամկետում:

Համաձայն Օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի՝ դատավարական ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, շաբաթներով և օրերով: Օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը: Նույն հոդվածի 4-րդ մասը փաստում է, որ տարիներով, ամիսներով, շաբաթներով կամ օրերով հաշվարկվող դատավարական ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, շաբաթվա, ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օրերով հաշվարկվող դատավարական ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից նկատելի է, որ վերաքննության կարգով միջանկյալ դատական ակտի բողոքարկման ժամկետի սկիզբը սկսում է հոսել միջանկյալ դատական ակտը ստանալուց հետո:

Վարչական դատարանի՝ միջանկյալ դատական ակտն ստանալու կապակցությամբ, Հայցվորը, վերաքննիչ բողոքում հստակորեն նշել է, որ այն ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայությունում ստացվել է 2013 թվականի հոկտեմբերի 11-ին և, որպես ապացույց, վկայակոչել՝ գործում առկա հետադարձ ծանուցման թերթիկը և վերաքննիչ բողոքին կցված՝ Վարչական դատարանի վերադարձման մասին գրության լուսապատճենը, որի վրա փաստաթուղթը ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայությունում մուտք անելու ամսաթիվը: Միննույն ժամանակ, Հայցվորը Դատարանի դատական ակտի բողոքարկման 15-օրյա ժամկետի մեջ անտեղի ներառելով ոչ աշխատանքային օրեր համարվող 2013 թվականի հոկտեմբերի 12-ը, 13-ը, 19-ը և 20-ը, հոկտեմբերի 25-ի թվակիր վերաքննիչ բողոքում միջնորդություն է ներկայացրել՝ բողոքարկման համար բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ:

Այդքանով հանդերձ, Վերաքննիչ դատարանը չգիտես ի՞նչ ապացույցների և տվյալների հիման վրա եզրահանգել է, որ Հայցվորը Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտն ստացել է ոչ թե հոկտեմբերի 11-ին, այլ դրանից ավելի վաղ և այդ առումով, վերաքննիչ բողոքը ժամկետանց համարելով, անհիմն եզրակացրել է, որ Հայցվորը կորցրել է Վարչական դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքը:

Մինչդեռ Վերաքննիչ բողոքից նկատելի է, որ, ի թիվս այլ փաստաթղթերի, բողոքին կից ներկայացված է նաև վերաքննիչ բողոքում վկայակոչված փաստաթղթերի լուսապատճենները: Սակայն, այդ փաստաթղթերի լուսապատճենները նյութերից բացակայում են: Նման պայմաններում Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը բողոքը պետք էր վերադարձներ Հայցվորին՝ թերությունները վերացնելու և կրկին բողոք ներկայացնելու հնարավորություն ընձեռնելու համար, ինչը չի կատարվել: Այդ այն դեպքում, երբ ԼՂՀ դատարանների նախագահների խորհրդի կողմից 2009 թվականի ապրիլի 21-ի թիվ 11-Լ որոշմամբ հաստատված՝ ԼՂՀ դատարանների գործավարության կանոնների 3-րդ գլխի 9-րդ կետի համաձայն՝ էթե փոստային ծառայության միջոցով ստացված փաստաթղթերում հայտնաբերվում է կից փաստաթղթերի ցանկի հետ որևէ անհամապատասխանություն կամ որևէ փաստաթղթի, փաստաթղթի հավելվածի, գործի հատորի կամ իրեղեն ապացույցի բացակայություն, ապա այդ դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն (ակտ)՝ երեք օրինակից, որի մեկ օրինակն ուղարկվում է առաքողին, երկրորդը կցվում է ստացված փաստաթղթին, իսկ երրորդը պահվում է գրասենյակում: Ակտն ստորագրում է փաստաթուղթն ստացող գրասենյակի պատասխանատու դատական ծառայողը և (կամ) գրասենյակի պետը: Ավելորդ չէ

նշել, որ Հայցվորը վճռաբեկ բողոքին կից ներկայացրել է նաև Վարչական դատարանի միջանկյալ դատական ակտը 2013 թվականի սեպտեմբերի 11-ին ստանալու վերաբերյալ ապացույց համարվող փաստը:

Այսպիսով, Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վարույթի նյութերում առկա չէ որևէ ապացույց այն մասին, որ վճարման կարգադրություն արձակելու հայցադիմումը մերժելու մասին Դատարանի որոշումը Հայցվորը ստացել է 2013 թվականի հոկտեմբերի 11-ից ավելի վաղ:

Նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ որևէ գնահատական չի տվել Վարչական դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 27-ի որոշմանը և բողոքը վերադարձրել է՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ, ուստի Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 6-ի որոշումն ենթակա է վերացման և բողոքը քննելու համար նյութերն ուղարկման Վերաքննիչ դատարան:

Համաձայն Օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Վերաքննիչ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը Գերագույն դատարանի կողմից վերացվելու դեպքում բողոքը համարվում է վերաքննիչ դատարանում ընդունված՝ սկզբնական ներկայացման օրը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 5-րդ մասով, 118-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 118.15-118.17-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության ներկայացուցիչ Ժ.Կարապետյանի վճռաբեկ բողոքը բավարարել: ԸԻԴ 3925/03/2013թ. վարչական նյութով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 6-ի որոշումը վերացնել և վերաքննիչ բողոքը քննելու համար նյութերն ուղարկել ԼՂՀ վերաքննիչ դատարան:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ**

**Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**